ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 3

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04-ը մայիսի 2018թ.

Ժամը 15^{30}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

07.05.2018թ., ժամը 10:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Չափագրման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1.	«Գեոշին Գրուպ» ՍՊԸ՝ համատեղ գործունեությամբ «ՍՊ ԳԵՈՆԱՎԻԹԵԼ» ՍՊԸ-ի հետ
2.	«ԱՐՏԷԴ» ՍՊԸ
3.	«Է. Ապրեսյան» ՍՊԸ
4	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
5	«Մեծ Մասրենի» ՍՊԸ
6	«Ստեփրիկ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «Ստեփրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցույթի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված մասնակցի իրական շահառուների մասին տվյալների լրացման կարգը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին (իրական շահառուների հայրանունները նշված չեն),

- «ԱՐՏԷԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցույթի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված մասնակցի իրական շահառուների մասին տվյալների լրացման կարգը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին (նշված չեն իրական շահառուի հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տեսակը), բացի այդ, «ԱՐՏԷԴ» ՍՊԸ-ն ներկայացված՝ մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ընթացակարգի 1-8 չափաբաժիններին, այնինչ մրցույթն իրականացվել է 1 չափաբաժնի սահմաններում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել ներկայացված շտկումները քննարկելուց հետո:

11.05.2018թ., ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «Ստեփրիկ» և «ԱՐՏԷԴ» ՍՊԸ-ների կողմից առկա անհամապատասխանությունները շտկվել են և վերջիններիս կողմից ներկայացված հայտերը գնահատվեցին հրավերի պահանջներին համապատասխան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. Տես Հավելված N 1

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Սույն ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

4.1 **14.05.2018թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Մեծ Մասրենի» ՍՊԸ-ն: Մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցնող մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ- ԳՀԾՁԲ-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի *«Ֆինանսական միջոցներ»* որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՇՁԲ-10/16» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11[10]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

14.05.18թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/16» ծածկագրով ընթացակարգի գների ամփոփում

Հ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Նախ. գին/ՀՀ դրամ/	«Գեոշին Գրուպ» ՍՊԸ՝ համատեղ գործունեությամբ «ՍՊ ԳԵՈՆԱՎԻԹԵԼ» ՍՊԸ-ի հետ		«ԱՐՏԵԴ» ՍՊԸ		«Է. Ապրեսյան» ՍՊԸ		«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ		«Մեծ Մասրենի» ՍՊԸ		«Ստեփրիկ» ՍՊԸ		Ի՞նչ տեղ գրաղեցնող մասնակից
			Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Շենքերի չափագրման ծառայություններ	53,110	70,917	85,100	230,083	230,083	44,110	44,110	89,850	89,850	**42,094**	**42,094**	268,078	268,078	«Մեծ Մասրենի» ՍՊԸ

Ներկայացված են առանձին տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում մասնակիցների առաջարկած գները:

Գնահատող(ՀԱՊ) Ս. Աբովյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Հ. Բաղալյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները հանձնակարգող՝ Ռ. Մարդոյան